TRIPP նախագիծը. աշխարհաքաղաքական ռիսկեր և տարածաշրջանային նոր իրողություններ

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 21.04.2026 թ.[1]

Անոտացիա

ԱՌՎԱԿ-ը վերլուծում է Trump Route for international Peace and Prosperity (TRIPP) ռազմավարական նախաձեռնության կենսունակությունն Իրանի շուրջ լայնածավալ սրացման և ԱՄՆ-ում ներքաղաքական ճգնաժամի պայմաններում: Քննարկվում են տարածաշրջանային առանցքային դերակատարների դիրքորոշումները, Սյունիքում ենթակառուցվածքների անվտանգության ռիսկերը և Երևանում իշխանափոխության պարագայում վաշինգտոնյան հռչակագրի չեղարկման հավանականությունը: Հեղինակն ուսումնասիրում է ստորագրող կողմերի ձևական լավատեսության և նախագծի իրականացմանը խոչընդոտող առարկայական որոշիչների միջև առկա հակասությունները: Հետևություն է արվում, որ TRIPP-ը վերածվում է ապակայունացնող գործոնի՝ զուրկ ինքնուրույն տնտեսական եկամտաբերությունից և կախված ամերիկա-իրանական դիմակայության վերջնարդյունքից:

Բանալի բառեր. *աշխարհաքաղաքականություն, TRIPP, «Թրամփի երթուղի», Հարավային Կովկաս, իրանական պատերազմ, Սյունիք, Հայաստան, Ադրբեջան, Թուրքիա, ԱՄՆ, տարածաշրջանային անվտանգություն, տրանսպորտային միջանցքներ*:

1. Նախապատրաստման դինամիկան և փորձագիտական թերահավատությունը

Իրանի շուրջ ստեղծված իրավիճակն արդիականացրել է նոր պայմաններում *Trump Route for International Peace and Prosperity* (TRIPP) նախագծի իրագործելիության աստիճանի մասին քննարկումը: Մի շարք փորձագետների գնահատանքով, ովքեր 08.08.2025 թ. վաշինգտոնյան հռչակագրի ստորագրումից ի վեր հետևում են այս խնդրին, նախագիծը հիմնարար նշանակություն ունի տարածաշրջանում ԱՄՆ քաղաքականության համար, ու, հետևաբար, դրա իրականացումը դիտարկվում է որպես այլընտրանք չունեցող, թեև չի բացառվում գործնական քայլերի ժամանակավոր հետաձգման հնարավորությունը՝ Իրանի շուրջ տեղի ունեցող վերջին իրադարձությունների լույսի ներքո: Թերահավատները, իրենց հերթին, պնդում են, որ տարածաշրջանում տեղի կունենա ուժերի հավասարակշռության կտրուկ փոփոխություն, ինչն անխուսափելիորեն կազդի TRIPP-ի հեռանկարների վրա՝ առնվազն իր աշխարհաքաղաքական և ֆինանսատնտեսական շահառուների փոխդասավորության վերանայման առումով: Առավելագույնը՝ նախագիծը կմնա թղթի վրա կամ կլուծարվի ստորագրող կողմերից մեկի կողմից՝ դրա անհեռանկարային լինելու և ստեղծված իրողություններին չհամապատասխանելու պատճառով:

Դատելով բաց աղբյուրներից՝ ներկայումս նախագծի մասնակիցները շարունակում են նախապատրաստական աշխատանքները. Հայաստան պարբերաբար այցելում են ԱՄՆ-ից ժամանած փորձագիտական աշխատանքային խմբեր, կատարվում են շինարարական աշխատանքների գնահատումներ ու նախագծում, ինչպես նաև համաձայնեցվում է իրավական հարցերն ու տեխնիկական մանրամասների լայն շրջանակը:

[1] Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 18.04.2026 թ.:

Դրան զուգահեռ՝ Ադրբեջանը գործնականում ավարտում է դեպի հայկական սահման ձգվող հաղորդակցությունների համալիր անցկացումը: Թուրքիան նաև ակտիվորեն շինարարական և վերանորոգման աշխատանքներ է իրականացնում Կարս–Իգդիր–Արալըք–Դիլիջու երկաթուղային երթուղում: Պաշտոնական Անկարան ուղղակի կապ չունի TRIPP նախագծի հետ, սակայն Թուրքիայում տիրող ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում մինչև Նախիջևան երկաթգծի անցկացման զգալի ծախսերը վկայում են, որ Անկարան Վաշինգտոնից որոշակի երաշխիքներ է ստացել «*Թրամփի երթուղու*» իրականացման ոչ այլընտրանքայնության վերաբերյալ:

Ըստ արտաքին նշանների, նախապատրաստման գործընթացը դեռ ընթանում է սովորական տեմպերով: Այնուամենայնիվ, կան մի շարք գործոններ, որոնք միասին կարող են հանգեցնել մոտ ապագայում այս նախաձեռնության ձախողմանը:

2. Իրանական պատերազմի գործոնը. անվտանգության երաշխիքների զրոյացումը

ԻԻՀ-ն պահպանողական թևի բարձրաստիճան պաշտոնյաների մակարդակով (ներառյալ այաթոլլա Ալի Խամենեին, ով զոհվել է ամերիկա-իսրայելական հարձակման հետևանքով) բազմիցս հայտարարել է, որ TRIPP նախագիծը սպառնալիք է ներկայացնում Թեհրանի շահերի համար, և իրանական սահմանների մոտ դրա իրագործումն անթույլատրելի կլինի: Իրանի իշխանությունները TRIPP-ը գնահատում են որպես հարթակ անմիջապես իրենց հյուսիսային սահմաններին ամերիկյան ռազմական և հետախուզական ներկայության տեղակայման համար, ինչպես նաև դրանում ներունակ սպառնալիք են տեսնում՝ կապված տարածաշրջանում թյուրքական գործոնի ուժեղացման հետ, ինչը կարող է բացասական հետևանքներ ունենալ ինչպես երկրի վրա արտաքին ճնշման, այնպես էլ ազգային անջատողականության ներքին միտումների համատեքստում:

Ի թիվս այլ խնդիրների, Թեհրանը մտահոգություն է հայտնում Սյունիքում ԱՄՆ-ի կողմից Հայաստան և Վրաստան իրանական մուտքի հնարավոր արգելափակման վերաբերյալ, մի երթուղի, որն ապահովում է ԻԻՀ-ի առևտրա-լոգիստիկ կապը Սևծովյան ավազանի երկրների և Եվրոպայի հետ: Վերջապես, TRIPP-ը չընդունելու ևս մեկ դրդապատճառ է հանդիսանում Բաքվի վրա էական ազդեցության լծակի կորստյան սպառնալիքը, ազդեցություն, որպիսին Իրանի տարածքով Ադրբեջանի կապն է նախիջևանյան արտատարածքի հետ: Թեհրանը Բաքվին քանիցս առաջարկել է կենտրոնանալ հենց այդ՝ թյուրքական երկրների հաղորդակցության համար առավել լավարկված երթուղու ենթակառուցվածքի ֆինանսավորման և ընդլայնման վրա՝ իր կողմից երաշխավորելով դրա անվտանգությունը: Թյուրքական պետությունների ինտեգրման միտման լույսի ներքո Իրանը նշված տրանսպորտային-էներգետիկ միջանցքը դիտարկել է որպես Թյուրքական պետությունների կազմակերպության (ԹՊԿ) նկատմամբ վերահսկողության ներունակ գործիք և տարանցումից ստացվող զգալի եկամուտների աղբյուր:

Այնուամենայնիվ, Սպիտակ տանը TRIPP-ի հռչակագիրը ստորագրելու ժամանակ անտեսվել են Իրանի մտահոգություններն ու նախաձեռնությունները: Վաշինգտոնում, Բաքվում, Անկարայում, ինչպես նաև Երևանում թերահավատորեն են ընկալվել Թեհրանի սպառնալիքները՝ ելնելով այն համոզմունքից, որ Իրանի իշխանությունները, չնայած իրենց կոշտ հռետորաբանությանը, չեն համարձակվի արմատական ուժային միջոցներ ձեռնարկել «*Թրամփի ճանապարհի*» նկատմամբ:

Իրանական իշխանությունների կտրական տոնն իսկապես որոշ չափով հակասում էր նախագծի տապալմանն ուղղված ուժային քայլերի դիմելու նրա իրական պատրաստակամությանը: 2025 թ. հուլիսյան «12-օրյա պատերազմից» հետո Իրանում վախենում էին ԱՄՆ-ի հետ նոր բախումից, և հազիվ թե TRIPP-ի մասին պայմանագիրն այն ժամանակ իրանական վերնախավերի կողմից դիտարկվեր որպես *casus belli*, որին պետք է անհապաղ հետևեին ԱՄՆ-ի, ինչպես նաև Ադրբեջանի և Հայաստանի դեմ կտրուկ գործողությունները: Ավելին, ինչ-որ պահի իրանական քաղաքական վերնախավում չափավոր բարեփոխիչ թևը նույնիսկ սկսեց առաջ տանել այն թեզը, թե «*Թրամփի երթուղին*» Թեհրանի որոշակի պահանջների կատարման պայմանով սպառնալիք չի ներկայացնի նրա համար: Այդ մասին է վկայում ԻԻՀ նախագահ Մասուդ Փեզեշքիանի օգոստոսյան հայտարարությունը, որում նա կարծիք է հայտնել, թե TRIPP նախագծի՝ Իրանին սպառնացող վտանգների մասին խոսակցությունները «*խիստ չափազանցված են*»:

Իրանցի պահպանողականները, ամենայն հավանականությամբ, օգտագործել են բարեփոխիչների փաստարկները, որպեսզի օրակարգից հանեն ամերիկյան նախաձեռնությանը իրենց խոստացած հակազդեցության հարցը և խուսափեն ամերիկա-իրանական առճակատման վերսկսման նոր առիթներից: Առարկայորեն ԱՄՆ-ի հովանու ներքո տարածաշրջանային երթուղու կառուցման գործընթացում Իրանը պատրաստ չէր ուժային միջամտության, որի հետ նա, ընդ որում, ֆորմալ առումով ուղղակի կապ չունի: Հետևաբար, Թեհրանը նախընտրեց TRIPP-ը թողնել ԱՄՆ-ի առջև գծած «կարմիր գծի» հետևում, որպեսզի իր հեղինակությունը պահպանելով հանդերձ՝ նրա հետ ռազմական հակամարտության նոր հիմքեր չստեղծի:

Սակայն իրավիճակը կտրուկ փոխվեց 2026 թ. փետրվարի 28-ին Իրանի դեմ ամերիկա-իսրայելական կոալիցիայի սանձազերծած նոր պատերազմն սկսվելուց հետո: ԻԻՀ ողջ իշխանական համակարգին ուղղված գոյութենական սպառնալիքը և, ընդհանուր առմամբ, պետական ինքնիշխանության կորստի ռիսկը հանգեցրին հարցի հանմանը ԱՄՆ-ի հետ հարաբերություններում խոհեմության և ծայրահեղ զգուշավորության օրակարգից: Դոնալդ Թրամփն առաջին գրոհները վերապրած Իրանի ռազմաքաղաքական ղեկավարությանն այլ ընտրություն չի թողել, քան բոլոր հասանելի միջոցներով պաշտպանությունը, միաժամանակ ստիպված լինելով բախվել ոչ միայն ռազմական կորուստների հետ: ԱՄՆ-ի դաշնակից Մերձավոր Արևելքի երկրների

նավթագազային, լոգիստիկ և տեխնոլոգիական ենթակառուցվածքների վրա Իրանի հարձակումները վկայում են, որ ամերիկյան զինվորականներին, ինչպես նաև տարածաշրջանի ֆինանսատնտեսական շահերին առավելագույնս վնաս հասցնելու իր ձգտման մեջ Թեհրանն անտեսում է ցանկացած «կարմիր գիծ»:

Փորձագիտական հանրությունը, հետաքրքրություն ցուցաբերելով TRIPP-ի ճակատագրի նկատմամբ, գործնականում միաձայն է իր գնահատանքում. «*Թրամփի երթուղու*» ենթակառուցվածքն, անկախ իր պատրաստության աստիճանից, ընթացիկ հակամարտության պայմաններում անխուսափելիորեն կենթարկվեր Թեհրանի հարձակմանը: Իրանը ցուցադրել է իր պատրաստակամությունը փակելու Հորմուզի նեղուցը՝ ածխաջրածինների արտահանման համար առանցքային նշանակություն ունեցող համաշխարհային ծովային զարկերակը, ընդ որում՝ անտեսելով միջազգային հանրության շահերը: Այդ իսկ պատճառով քիչ հավանական է, որ հայկական Սյունիքով անցնող ցամաքային ճանապարհը կխուսափի նման ճակատագրից: Հետևաբար, ամերիկա-իսրայելական հակամարտության երկարաձգման կամ դանդաղ ընթացքի պահպանման դեպքում նախագծի իրականացումը կհետաձգվի Թեհրանի կողմից հարվածների մշտական սպառնալիքի հետևանքով:

Հակամարտության ցանկացած ձևի պահպանումը կխոչընդոտի այն մասնավոր ներդրումների հոսքին, որոնց հետ հույսեր էին կապում Վաշինգտոնն ու Երևանը: Իսկ եթե ամերիկա-իրանական հակամարտությունն ավարտվի ամուր խաղաղությամբ, ինչը ենթադրում է Թեհրանի նկատմամբ պատժամիջոցների վերացում, նրա միջազգային ակտիվների ապասառեցում և առևտրատնտեսական կապերի հաստատում, ապա TRIPP-ի աշխարհաքաղաքական և տնտեսական նշանակությունը կնվազի զգալիորեն: Այդ դեպքում երթուղին համաշխարհային տնտեսության ծավալով կկորցնի իր շահութաբերությունը, քանի որ Իրանը, լինելով «*ռեաբիլիտացված*» և համագործակցության համար բաց, կդառնա մայրցամաքային ամենահարմար տարանցիկ հարթակը: Նման իրավիճակում «*Թրամփի երթուղու*» նախագծի առաջխաղացումը ձեռնտու կլինի միայն Ադրբեջանին ու Թուրքիային՝ այսպես կոչված, «*Զանգեզուրի միջանցքի*» միջոցով աշխարհագրորեն տարանջատված «*թյուրքական աշխարհը*» միացնելու նրանց ծրագրերի համատեքստում:

Սակայն տեղաբաշխվելու պարագայում, երբ ԱՄՆ-ը կորցնի հետաքրքրությունը TRIPP նախագծի նկատմամբ, թուրք-ադրբեջանական երկյակի նախաձեռնությունն զգալիորեն կկորցնի իր կշիռը: Այն չի կարող իրականացվել առանց Թեհրանի համաձայնության, որն իր հերթին դժվար թե բարեհաճություն ցուցաբերի ԹՊԿ դաշինքի՝ ինքնիշխան հայկական տարածքով արտատարածքային միջանցքի միջոցով անարգել ցամաքային կապի նախագծի նկատմամբ: Իրանն, ամենայն հավանականությամբ, ուժի սպառնալիքի ներքո թույլ չի տա նման ձևաչափով երթուղու գործարկումը, ինչում նրան կարող է աջակցել ՌԴ-ն՝ ելնելով Հարավային Կովկասի տարածաշրջանում ներքին անվտանգության և աշխարհաքաղաքական շահերի վերաբերյալ սեփական մտավախություններից:

Ամփոփելով՝ պետք է եզրակացնել, որ առանց Թեհրանում գործող իշխանությունների հետ համաձայնեցնելու և նրանց կողմից համապատասխան երաշխիքներ ստանալու, TRIPP նախագիծը կմնա անկենսունակ՝ անվտանգության մշտական սպառնալիքով, ինչն անխուսափելիորեն ներդրումների պակասուրդի կհանգեցնի: Իսկ եթե հակահիրանական կոալիցիային հաջողվի Թեհրանում գործող վարչակազմը փոխել Արևմուտքի հանդեպ բարեհաճ վարչակազմով՝ առանց իրանական ինքնիշխանության և տարածքային ամբողջականության խախտման, «*Թրամփի միջանցքը*», բնականաբար, կկորցնի իր շահութաբերությունը: Այդ դեպքում նախագծի միակ շահառուներ կմնան Թուրքիան և Ադրբեջանը, սակայն առանց Արևմուտքի աջակցության նրանց համար դժվար կլինի նախագիծը վերածևակերպել որպես ներթյուրքական ինտեգրման օրակարգի տարր:

3. Քաղաքական ճգնաժամը և ԱՄՆ-ում իշխանափոխության հեռանկարը

Իրանի շուրջ ստեղծված փակուղային իրավիճակը բացասաբար է անդրադարձել Դ. Թրամփի վարկանիշի վրա և, ընդհանուր առմամբ, թուլացրել ԱՄՆ հանրապետական կուսակցության դիրքերը: Վերլուծաբաններն այն կարծիքին են, որ դեմոկրատական կուսակցությունն արդեն իսկ զգալի շանսեր ունի իմպիչմենտի միջոցով Թրամփին իշխանությունից հեռացնելու համար: Սակայն երաշխավորված հաջողություն ապահովելու համար նրանք, ենթադրաբար, կսպասեն 2026 թ. նոյեմբերյան միջանկյալ ընտրություններին, որից հետո, ըստ բոլոր սոցիոլոգիական հարցումների, հանրապետականները կարող են կորցնել մեծամասնությունը Կոնգրեսի երկու պալատներում: Այս փոխդասավորության դեպքում նախագահը կզրկվի Կապիտոլիումի բլրի աջակցությունից, ինչն իմպիչմենտի գործընթացը գրեթե անբեկանելի կդարձնի:

Դեմոկրատները համոզված են, որ նշված պահին Թրամփը չի կարողանա կարգավորել իր արտաքին քաղաքականության իսրայելա-իրանական մասը և, որ ամենակարևորն է, իրանական ձախողումը կանդրադառնա նաև հաջորդ նախագահական ընտրություններում հանրապետականների ամենաուժեղ թեկնածուի՝ Ջեյ Դի Վենսի դիրքերի վրա: Թեհրանի հետ բանակցությունների միջոցով իրավիճակը շտկելու նրա փորձերն այս պահին լավատեսություն չեն ներշնչում:

Ամեն դեպքում, Սպիտակ տան գործող վարչակազմը ռիսկ է անում բախվել վաղաժամ հեռանալու վտանգի հետ, որը կարող է ուղեկցվել ԱՄՆ պատմության մեջ նրա գործունեության աննախադեպ իրավաքաղաքական վերանայմամբ: Անկախ փորձագետների գնահատանքով, այսպես կոչված, «*էփշտեյնի գործի*» շուրջ աղմկահարույց խոսույթը, իրանական պատերազմը և ինչպես ներքին, այնպես էլ միջազգային ասպարեզում Դ. Թրամփի վիճահարույց որոշումների զգալի հատվածը հղի է նախագահի պաշտոնում նրա ողջ գործունեության վարկաբեկմամբ և ամերիկյան նոր իշխանությունների կողմից նրա նախաձեռնությունների նպատակահարմարության հիմնովին վերանայման գործընթացով: Չի բացառվում, որ TRIPP

նախագիծը, որն անքակտելիորեն կապված է Դ. Թրամփի անվան հետ և համարվում է նրա «*անձնական ձեռքբերումը*», արագորեն ձեռք կբերի Արևմտյան Ասիայի տարածաշրջանում աշխարհաքաղաքական նոր իրողությունների պայմաններում որևէ հեռանկարից զուրկ և ԱՄՆ ազգային շահերի համատեքստում էական արժեք չներկայացնող նախաձեռնության համբավ:

4. ՀՀ ներքաղաքական գործոնը. պարտավորությունների վերանայման ռիսկը

TRIPP նախագծի հեռանկարներն ուղղակիորեն կախված են Հայաստանի ներքաղաքական դասավորությունից: Այս հանգամանքին պատշաճ ուշադրություն չի դարձվում, սակայն ընտրություններում հայկական ընդդիմության հաղթանակի և գործող իշխանության արտաքին քաղաքական թղթածրարի կանխատեսվող վերարժևորման դեպքում «*Թրամփի ուղի*» նախագծի իրավական, տնտեսական և տեխնիկական բազան կարող է վերանայման ենթարկվել Երևանի կողմից: Բացի այդ, խոսքը կարող է վերաբերել Վաշինգտոնյան հռչակագրի ամբողջությամբ չեղյալ հայտարարմանը, եթե ՀՀ նոր կառավարության պարագայում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության գործունեությունը ճանաչվի որպես օրենսդրությանը, ինքնիշխանությանը և ազգային շահերին հակասող:

Այսպիսի սցենարը հնարավոր է թվում՝ հաշվի առնելով հակահիրանական ռազմարշավի և Հարավային Կովկասում Ռուսաստանի աշխուժացման հետևանքով տվյալ տարածաշրջանում ԱՄՆ դիրքերը թուլանալու մեծ հավանականությունը: Նույնիսկ չեղյալ հայտարարելուց հրաժարվելու դեպքում Երևանը, Մոսկվայի և Թեհրանի ծածուկ աջակցությամբ, կարող է համակարգված կերպով ձգձգել նախագծի դետալների ու տարրերի համաձայնեցման գործընթացը, ինչպես նաև հնարավոր է հասնել TRIPP-ի շահառուների ողջ փոխդասավորության վերանայմանը՝ գործելով նախ հանուն սեփական, ինչպես նաև Իրանի ու ՌԴ-ի շահերի: Տվյալ դեպքում TRIPP-ի վերաբերյալ նախկին պայմանավորվածությունների հարկադիր կատարմանը Երևանին իրավական մեթոդներով պարտադրելու Վաշինգտոնի, Անկարայի և Բաքվի շանսերը ծայրահեղ ցածր են գնահատվում, քանզի «*Թրամփի միջանցքի*» նախագիծն իրականացման ենթակա է բացառապես կապված լինելով հայ-ադրբեջանական համապարփակ խաղաղության պայմանագրի վերջնական ստորագրման հետ: Առանց տվյալ փաստաթղթի TRIPP-ը մնում է միայն հռչակագիր, որն այլընտրանք չունեցող կատարում չի նախատեսում: Հետևաբար, առանցքային հարցն այն է, թե արդյո՞ք Բաքուն՝ Երևանի իշխանափոխության դեպքում, պատրաստ կլինի ընդունել հայկական կողմի նոր պայմանները՝ համապարփակ խաղաղության պայմանագրի շրջանակում TRIPP նախագծի պահպանման համար: Նման հարցադրումն արմատապես փոխում է «*Թրամփի միջանցքի*» ողջ օրակարգի գնահատականը՝ այն ուղղակի կախվածության մեջ դնելով Երևանի դիրքորոշումից և, որպես հետևանք, Հայաստանի նոր ղեկավարության վրա ՌԴ-ի և ԻԻՀ-ի ազդեցության աստիճանից:

5. Ամփոփում

Հաշվի առնելով թվարկված բոլոր գործոնները՝ TRIPP նախագծի իրականացման հեռանկարները, գոնե այն տեսքով, որով այն ներկայացվել է լայն հանրությանը, անորոշ են թվում: Ստորագրող կողմերը շարունակում են հայտարարել, թե նախապատրաստական աշխատանքներն ընթանում են ըստ սահմանված ժամանակացույցի, սակայն տարածաշրջանում սրընթաց փոփոխվող իրավիճակը և ԱՄՆ-ում խորացող իշխանական ճգնաժամը հակառակի մասին են վկայում: Մի շարք ամերիկացի վերլուծաբաններ արդեն վստահորեն արձանագրում են, որ TRIPP-ն անկենսունակ նախագիծ է, այն բխում է Թրամփի հավակնություններից և «*զուրկ է ինքնուրույն տնտեսական հիմնավորումից*»: Հետևաբար, այդ նախագիծը ոչ միայն չի նպաստում հայ-ադրբեջանական խաղաղ օրակարգի ամրապնդմանը, այլև կարող է դառնալ դրա ձախողման և, որպես հետևանք, Հարավային Կովկասում նոր սրացման պատճառներից մեկը:

Այսպիսով, իր աղմկոտ ներկայացմամբ և հետագա՝ իրականության հետ առնչվելիս հեռանկարների մշուշոտության ցուցադրությամբ, TRIPP-ը կրկնում է բազմաթիվ աշխարհաքաղաքական նախագծերի ճակատագիրը, որոնք ևս սկզբում հորջորջվում էին որպես տնտեսական առումով նպատակահարմար և շահութաբեր ծրագրեր: